

— Ո՛վ պատանեակդ՝ չէ պատմելի՝ վէպ շարաշար իմ վշտաց,  
 Զորս կրեցի ի զիշատիչ՝ յարիւնախանձ ոստխաց,  
 Արշաւելով՝ մարգախողխող՝ և բռնաւոր՝ իշնամեաց,  
 Կոտորեցին զիմ բնակիչս, զօրէն անգութ զազանաց,  
 Աւերելով զհնչակապ բերդս և զգալատս քաղաքի,  
 Եւ այրելով զբնակարանս՝ թողին նոքա ամնայի:  
 Յայն սակս ի սուգ՝ նստեալ հեծեմ՝ բազմադարեան աւերման,  
 Իբր զճնօզս՝ որոց տեսեալ՝ զլամբան որբոց՝ լան ողբան:  
 Այլ անցին ամք, անցին և գարք՝ չգտաւ սիրտ որ կարեկից,  
 Յայց կանեղ՝ առ իս ի հարց թշուառականս աղետից,  
 Ո՛րդիք Հայկայ՝ զտունս յոստխաց՝ կործան աւեր տեսանին,  
 Յանհոգս նստեալ՝ ընդ օտարաց չքնաղ պաղատս զմայլին:  
 Սիրեն նորս՝ վարել ըզկեանս ի տունս օտար՝ զերգ սարուկ,  
 Քան յաշխարհի իւրեանց սիրուն՝ լինել ազատս՝ բարեշուք:

ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՏ:

Ի Բ. Գ. Գ.:

## ՊԼՆԻՌՈՒՄՍ ՀԱՅ ՄՇԱԿ.

Գիշեր լինէր, աստեղաց բոյլ շողայր յերկին կապուտակ,  
 Լուսին նազէր ճախր ընդ այն ծիր, եւ լոյս սփռէր անապակ:  
 Ասող ցոլայր եւ գայր այլ նոր, մահկանացուն կայր յակօխ,  
 Խոկայր, ջեռնոյր, ոյժ տայր մտաց, զիտել նոցա պատճառ զեռ:  
 Ռամիկն պարզուկ կարծէ անշուշտ, այն մեռելոյ լինել ասող՝  
 Որ անց զնաց ինքն եւ ստուեր յանպատումեան յովկիան:  
 Իսկ որ գտեղի աստեղն կալաւ՝ է նորածնոյ այն ասող,  
 Զոր էն Աստուած աժ ի յաշխարհ, ընդ վերձևմեալն յաւիտեան:

Այլուր նոր խումբ ակումբ առեալ՝ զմեղեղիս յօրինեն,  
 Երգեն եւ լան, եւ հեկեկանք խեղդեն զձայն ողբանուէր:  
 Հայ մշակաց է թշուառ խումբ, յեց ընդ զետին, խիզը ընդ ծունկն,  
 Վտարանդի յերկիր օտար, յուշ տան ձայնին, որ հնչի յունկն:

Ահն այս խումբ՝ որ զեռ արթուն ի զիշերոյ լուռ պահուն՝  
 Մրմունչ բառնան սպասեն լուսոյն, փոյթ չեն նմա աչաց բուն:  
 Ոմն ընդ տաղեր իւր տիրական յիշէ զմայր կամնատու,  
 Այլ ոմն ընդ բան հեկեկանօք զհայր յիշէ խնամածու:

Զիւրեանց յիշեն թշուառ մանկտիս, երիկամունք կան ի դող,  
 Հեծեն, եւ լան, եւ աչաց բիրբ յորդ արտասուս կան ի լող:  
 Յիշէ մշակն եւ սղայ, եւ յուսահատ ասէ, բայ,  
 Եւ մեր արդեօք աւուրք գայցեն, յորս այս տխուր աչք ոչ լայցեն:

Այս խումբ է, ո՛հ, Հայ մշակաց, գաղթ ընդ օտար աստեղօք,  
 Այս խումբ է ո՛հ, սբանդուխտ Հայոց զիշերն համբուն թաց աջօք:

Լան, հառաչեն, ընդ հառաչանս զանուն յիշեն սիրելեաց,  
 Զորդուց կանանց զսէր յիշեն, որք ի նեղ խուղ զոչեն, Հնաց:

Հայ մշակ զգայուն եմող զհարսն ի լայլն,  
 Հեռացաւ յայլ տեղիս հայնայթել անդ բարիս:  
 Հայ մշակ քաջասիրտ՝ որ զառիւծ սլատառէ,  
 Աստ, սհ, աստ զլուխ ի թեք զիւր օրեր աւաղէ.

Յնորք զան եւ զնան, Հայ մշակ զալկահար՝  
 Զգետնի զարկանի, յիշելով զսիրահար:

Պանդխտին սիրահար ձեռն ի ծնօտ վշտահար՝  
 Լայ զիւր բաղդ զիւր փեսայ զեղբայն բացակայ:

Հայ մշակ ընդոստնու սեփի ի ցնորից,  
 Լու ի լու առ ընկերսն՝ տուտ բանայ անդ խօսից:

Հայ եղբարք, մինչեւ ցերք, մինչեւ ցերք յուսահատ,  
 Յընտանեաց տարագիր՝ աստ կայցեմք ի վհատ:

Զմեր հաւ յիշեսցո՛ւք, զայն արի վեհ արանց,  
 Թէ նորա եմք որդիք՝ յորդեսցուք զուխս արեանց.

Մինչեւ ցերք անօրէն արք մոլի մարդախանձ  
 Քակեսցեն զմեր տուն, ի լնուլ զիւրեանց զանձ:

Յիշեսցուք, Հայ եղբարք, հօր մերոյ բան վսեմ,  
 Եթէ եմք ժառանգորդ հօր փառաց աննսեմ:

Յիշեսցուք, թէ արին զիւրդ արկ ի գետին  
 Զայն բլուր մսեղի, զայն հերքով՝ պժգային:

Յիշեսցո՛ւք զվեհն Հայկ մարտագուռ այն արին,  
 Թէ զիւրդ սակաւուք սատակեաց զԱսորին:

Յիշեսցուք հօր մեր բան, Հայկ մտաց վեհ ծնունդ,  
 Թէ զիւրդ զորդիս իւր յարդարեաց ի մարտ թունդ:

Կամ մեռցուք, ասէր նա, կափուսցուք զմեր աչք,  
 Զգիտել մեր որդուց եւ թոռանց վայ եւ կանչք,

Կամ կացցուք յաղթական ի կրկէս խազմական,  
 Ի թափել զմեր տուն ի վատաց հերքովթեան.

Ոգի առցուք, միշտ յաղթեսցուք, թէ որդի եմք մեր հաւու,  
 ԶՔուրտս վանեսցուք, որ յար գերփէ, ՚ւ ժամս բազմութեան կարգայ լու:

Զգոն մեր կեանք, էր երկնչիմք, շունչ մի ունիմք եւ հոգի,

Մի՛, մի՛ Հային թերել զզլուխ, մինչ ի չարաց անարգի:

Աստ մթերեմք զանձս ոսկւոյ քաղցու սովու տոկալով,

Անդ անօրէնք զմեզ զերփեն, տօնս յօրինեն խնդալով:

Ընդ արշալոյսն, բարեկամաց քաղցրիկ ողջոյն տամք կացնի,

Ծարաւ ցճաշ յողոց հանեմք, ձեռք ի տապար անօթի.

Զհաց ցաւոց ճաշեմք տրտում, ընթրիս առնեմք անխնդում,

Աչք լող ի ծով զիշերն համբուն, թարց նիրհելոյ յառնեմք զուարթուն:

Ո՛հ, չկարեմ ժուժել այլ եւս, սիրտ իմ փղձկի յարեան ծով,

Սարսուռ զինեւ պատի արդէն, այրիմ, տապիմ ի հրոյ բով.

Վրէժ, գոչեմ, անմեղ արեանց, զոր ֆիւրտը թափեն անինայ,  
 Վրէժ սրբութեանց Անուան Գառին Ազգայնութեան մեր վկայ:  
 Ո՛հ, Հայ եղբարք, զոր պողոկատ մանգաղ ի հունձ յօրինէք,  
 Ո՛չ կարիցէք ի սուր փոխել զորօրինակ ֆիւրտը առնեն:  
 Եթէ նոքօք ֆիւրտը անօրէնք յաճախ զմեզ խրատեն,  
 Ընդէր է մեզ կալ ի խոնարհ, եւ ոչ զնոյն մեր գործերը:  
 Մի է հաստիչ ամենայնի, եւ մի նորուն կամաց ծիր,  
 Եթէ միում զայն շնորհեաց՝ ոչ զլանայ վասն մեր:  
 Մեր սիրտ դեռ եւս մինչ ցարդ ժուժեն՝ զի կամք զերի մեր զերեաց,  
 Զորս հակայից մեր քաջ հարանց ձեռք ի զերի աստ խմբեաց:  
 Մեր սիրտ վատուժ, ո՛հ, ոչ ի բնէ, յակամայից արդ ժուժէ,  
 Խոնարհ ի զլուխ, այնց վատարանց հլու սպաս հարկանէ:  
 Մեր Տիգրանայ քաջ արքայի թէ եմք որդիք հարազատ՝  
 Խիզախեսցուք ընդ դէմ՝ չարաց, հարցուք յերկրի անվիանդ,  
 Զլեարդ ընդ թոք քանցեալ ի բաց ի նիշ ուժոյ Հայ բազկի,  
 Սպառեսցուք զճետ անիծեալ, զորդիս կեղծեալն վիշապի:  
 Թէ Վահագնի ի մեզ եռայ արիւն աշխոյժ այրական,  
 Թող հնչեսցեն ընդ այն ի փանդիւր եւ մեր անուանք յաղթական:  
 Մանկունք Գողթան թող ձեռք ի քնար թրթիւր տայցեն լարերաց,  
 Թող ընդ այն վէպ վեհ Վահագնի մեր յիշեսցի զորժ քաջութեանց:  
 Ապա թէ ոչ մերս վաստակոց զօտարս առնեմք ժառանգորդ,  
 Ի մեր երակ ոչ ներգործէ մերոյ հարանց արիւն յորդ:  
 Լաւ է, եղբարք, լաւ է բառնիլ անձանց մերոց յազգէ մեր,  
 Մինչ ոչ փայլին զործովք հարանց յասպարիզին մարտադոռ:  
 Այո, զոսկի աղտոտէ ժանգ, փայլից նորա ոչ տայ նիշ,  
 Ժանգ անպիտան է թոյլ որդի, ժառանգ փառաց աստեղց նիշ:  
 Արդ՝ Հայկ երբէք ծնաւ որդիս լինել Գրտաց ի զերիս,  
 Մինչ մեր ի նոյն՝ ծածկեմք զերթ ժանդ, հարանց մերոց սխրալիս:  
 Արդ՝ Հայ եղբարք, զինչ այս մեր կեանք, տրտում, տխուր եւ նկուռ,  
 Թէ զմեր սիրեմք զորդի զկին զհայր զմայր վշտասուն՝  
 Ոզի առցուք գէթ անգամ մի՝ փորձ փորձեսցուք զմեր բազդ,  
 Կամ քաջութեամբ մեռցուք անդէն, եւ կամ դարձցուք քաջայաղթ.  
 Յայնժամ սրբին մեր արտասուք կամ ի տխուրն զերեզման՝  
 Հողուով փայլեալ զերթ քաջ Վարդան եւ ընդ անկեալսն զօրական:  
 Կամ կեցցուք աստ անդորր կենօք ընդ ընտանիս բարեբաղդ՝  
 Զանուն թողեալ ի յաշխարհի, կեալ ընդ յաշխար բարեբաստ:

ՍԱՐԿ. ԵՆՈՎՔ ՄՈՎՈՒՍԵԱՆ:

